# ՈՒՄ ՊԵՏՔ ՉԷ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

## Ո՛չ պետությանը, ո՛չ էլ ակադեմիային

Հայրենի գիտության բարեփոխման ապարդյուն փորձերը շարունակում են մնալ հասարակության ուշադրության կենտրոնում:



Գիտությունների ազգային ակադեմիան, իրոք որ, Աստված գիտե թե ինչ է: Այդ մեծ նավը ազատ նավարկության դուրս եկավ Խորհրդային Միության փլուզումից հետո: Երկրի գանձարանում գիտության համար գումարների բացակայությունը ակադեմիական բյուրոկրատիան փոխանակեց անձեռնմխելիության եւ ստատուս-քվոյի պահպանման երաշխիքների հետ: Պետությունը տալիս է որքան կարող է, իսկ ակադեմիական բյուրոկրատիան՝ ղեկավարում իր նավը ինչպես կարողանում է:

Ակադեմիայի կյանքի հաջորդ 15 տարիները դարձան տեղում դոփելու ցայտուն օրինակ: Ակադեմիական վերնախավը բոլոր այդ տարիներին փաստորեն լուծում էր դարձյալ նույն՝ գիտության դեգրադացիայի հաշվին ստատուս-քվոյի պահպանման խնդիրը:

Շարունակությունը՝ էջ 2